

Կրիստիան Գե-Պոլիկեն

ՁՅԱՆ ԲԵՌԸ

ՎԵՊ

Թարգմանիչ՝

Կարինե Աղաբեկյան



Գ Ի Տ Ա Ն Ք  
Երևան 2018

We acknowledge the support of the Canada Council for the Arts for this translation

LE POIDS DE LA NEIGE par Christian Guay-Poliquin

## Գե-Պոլիկեն, Կրիստիան

**ՁՅԱՆ ԲԵՌՆ – Վեպ, Եր.: Գիտանք, 2018, 128 էջ.**

Վեպը 25-րդ գիրքն է *XXI դարի արձակ* մատենաշարի, որը ներառում է 13 երկրի լավագույն ժամանակակից գրողների գործերը:

Աշխարհից կտրված գյուղում վթարից տուժած մի երիտասարդ և նրան խնամող ծերունին ցրտաշունչ ձմռանը մաքառում են իրենց գոյությունը պահպանելու համար:

Ձյունաշատ ձմեռվա վառ, քնարական նկարագրություններով հագեցած այս վեպը ասես պատկերում է 90-ականների ցուրտ ու մութ Չայաստանը. էլեկտրականության կաթված, փայտի վառարան, վառելիքի ու պարենի սղություն, մութ գիշերներ, բնակիչների փախուստ, լքված տներ, ցրտամահ մարդիկ...

Գիրքը ֆրանսերեն հրատարակվել է Կանադայում և երկրորդ անգամ Ֆրանսիայում, արժանացել է բազմաթիվ մրցանակների, որոնցից ամենահեղինակավորը Կանադայի 2017թ. բարձրագույն գրական մրցանակն է (Le Prix littéraire du Gouverneur général):

ISBN 978-9939-810-42-3

© Christian Guay-Poliquin, 2016

“This edition is published by arrangement with La Peuplade in conjunction with its duly appointed agent L’Autre agence, Paris, France. All rights reserved.”

© «Գիտանք», թարգմանության և ձևավորման համար, 2018

Այսօր եղանակը ծածկել է ձյունը  
մետաղյա փայլով, և լռությունը ցնծում է

միախառնվելու ակնկալիքով,  
ճերմակ մետերը սլանում են մերքև

լեռները կառչում են  
ծառերի կեղևին ու փշոտ ճյուղերին

կանաչը չքանում է,  
կապույտը դառնում է ծիածանագույն,  
վերանում են  
դարչնագույնի ու շիկակարմրի  
ուրվագները

երբեմն մի թռչուն գծում է սև հետագիծ  
այս արագընթաց տարածքում

*Ձմեռ, 3.-Ն. Պոլիկեն, 1984*

## I ԲԱՎԻՂ

*Նայիր: Այս վայրը մարդու կյանքից ավելի մեծ է: Նա, ով փորձում է այստեղից փախչել, ստիպված է վերադառնալ: Նա, ով կարծում է, թե առաջանում է ուղիղ գծով, իրականում գծում է մեծ համակենտրոն շրջաններ: Այստեղ ոչինչ հնարավոր չէ ընդգրկել ձեռքերով կամ հայացքով: Այստեղ արտաքին աշխարհը մոռանալու ուժը ավելի զորեղ է, քան որևէ հուշ: Էլի ճայիր: Այս բավիղը ելք չունի: Գրավում է մեր ամբողջ տեսողաշտը: Ավելի լավ ճայիր: Ոչ մի հրեշ, ոչ մի սոված կենդանի չի այցելում Դեղալի այս խառնաշփոթ տարածքը: Մենք ծուղակում ենք: Կամ սպասում ենք, որ օրերն ու գիշերները մեր հախից գան: Կամ էլ թևեր ենք սարթում և թռչում-փախչում:*

38

Ամենուրեք իշխում է ձյունը: Տիրում է բնապատկերին, ճգնում է լեռները: Յնագանդ ծառերը հակվում են, թեքվում, կռանում են գետնին: Յրածարվում են կռանալ լոկ բարձր եղևնիները: Աներեր կանգնած են՝ ուղիղ ու սև: Նշում են գյուղի սահմանը և անտառի սկիզբը:

Լուսամուտիս առաջ գնում-գալիս են են թռչունները, կռվում են և իրար կտցում: Երբեմն նրանցից մեկը անհամազհատ նայում է խաղաղ տանը:

Արտաքին փեղկին լայնքով ամրացված է անկեղև բարակ մի ճյուղ, որը ճնշաչափ է ծառայում: Վեր ցցվելիս խոստանում է պարզ ու չոր եղանակ, կախվելիս՝ ձյուն: Այժմ եղանակը փոփոխական է, ճյուղը ուղիղ իր հետագծի մեջտեղում է:

Օրվա վերջն է: Գորշ երկինքն անթափանց է ու երանգագուրկ: Արևը չի երևում: Անընդհատ իրար դիպչելով՝ օդում պտտվում են ձյան փաթիլները: Տնից մի հարյուր քայլ հեռու, բացատում Մաթիասը խրում է երկար ձողը ձյան մեջ: Նման է նավի կայմի: Բայց առագաստ ու դրոշ չունի:

Ջրի կաթիլները սահում են քիվով և միանում սառցալուլաներին: Արևի երևալուն պես՝ դրանք պսպղում են սրասայր շեղբերի նման: Երբեմն դրանցից մեկը պոկվում է, ընկնում ու խրվում ձյան մեջ: Դաշույնի աննշան հարված է ձյան անհունությանը: Բայց ձյունն անպարտելի է: Շուտով կհասնի լուսամուտիս: Յետո դրա վերևի մասին: Եվ այլևս ոչինչ չեն տեսնի:

Ձմեռ է: Օրերը կարճ են ու ցրտաշունչ: Ձյունը ցույց է տալիս ատամները: Մեծ տարածքները կուչ են եկել:

### 39

Լուսամուտիս փեղկը խոնավ է: Փայտին գոյացել են գունավոր ծակոտկեն բծեր: Ցուրտ եղանակին դրանք պատվում են եղյամով ու բյուրեղներով: Նման է քարաքոսի:

Մի քանի ծղան ճրթճրթում են վառարանում: Իմ մահճակալից տեսնում եմ օդի հոսանքից կայծկտող ածուխները: Վառարանը հին է ու մեծ: Դռները բացվելիս ճռճում են: Այս սև ու թեթ թուջե զանգվածը մեր կյանքի հիմքն է:

Ես մենակ եմ ծածկապատշգամբում: Ոչինչ չի շարժվում: Ամեն ինչ իր տեղում է: Մուտքի աթոռակը, ճոճաթոռը, խոհանոցի պիտույքները՝ ամեն ինչ: Սակայն սեղանին կա մի տարօրինակ ոսկեգույն գլան: Առավոտյան այդտեղ չէր: Մաթիասը երևի գնացել է տան մյուս կողմը: Բայց ես ոչինչ չեմ նկատել:

Ցավը ինձ բաց չի թողնում: Բռնել է ինձ, ճզմում է և տիրանում: Դիմանալու համար փակում եմ աչքերս ու ինձ պատկերացնում ինքնաշարժիս դեկի առաջ: Կենտրոնանալով՝ նույնիսկ կարողանում եմ լսել շարժիչի ձայնը: Տեսնել կողքով սլացող բնապատկերը, զմայլվել ճանապարհի զուգամիտության կետով: Բայց հենց որ բացում եմ կոպերս, իրականությունն անտանելի է: Ես գամված եմ մահճակալին՝ ոտքերս բեկակալներով անշարժացված: Իմ ինքնաշարժն ընդամենը ծմռված մետաղի կույտ է ինչ-որ տեղ ձյան տակ: Եվ ես այլևս իմ ճակատագրի տերը չեմ:

Ստանոքս խախտում է լռութունը: Քաղցած են: Թույլ են ու ընդարմացած: Սնարասեղանին ընդամենը սև հացի փշրանքներ կան և սուրճի յուղոտ մրուր բաժակում: Հավանաբար, Մաթիասը շուտով կգա:

## 41

Դուռը բացվում է, և սառը օդի հոսանքը ներխուժում է սենյակ: Մաթիասն առաջ է գալիս և մի գրկաչափ վառելափայտ զցում է վառարանի մոտ: Ծղաններն իրար են զարկվում՝ կեղևի կտորտանքները թափելով հատակին:

Մաթիասը հանում է վերարկուն, չոքում է և կրակխառնիչով խառնում կրակը: Նրա հետևում ճոքակոշիկների հետքերը հալվում են և տարածվում հատակի թեքությամբ:

- Շատ ցուրտ չէ, - ասում է Մաթիասը՝ ձեռքերը մեկնելով վառարանին, - բայց խոնավ է: Թափանցում է մինչև ոսկորները:

Երբ բոցը փրփրոթում է՝ լիզելով մետաղյա պատերը, Մաթիասը փակում է վառարանի դռները, դնում է տաքանալու ապուրով կաթսան և դառնում է ինձ: Տնորված գիտնականի տեսք ունի՝ շնորհիվ երկար հոնքերի, սպիտակ մազերի ու ճակատն ակոսած խոր կնճիռների:

- Մի բան ունեն քեզ համար:

Բարձրացնում են հոնքերս: Մաթիասը վերցնում է սեղանից ոսկեզօծ գլանը և մեկնում է ինձ: Դեմքը փայլում է լայն ժպիտից: Գլանը ծանր է ու բացվող: Ծայրերն ապակեպատ են: Շուռ ու մուռ են տալիս: Հեռադիտակ է: Ժամանակին ծովայիններն օգտագործում էին նման հեռադիտակ՝ ափագիծը կամ թշնամու նավերը հայտնաբերելու համար:

- Դուրս նայիր:

Ես շտկվում եմ անկողնում, բացում եմ երկարացող խողովակն ու հայում եմ աչքիս: Պատկերը զուգամիտվում է աչքիս, և յուրաքանչյուր բան հստակ ուրվագծվում է: Թվում է, թե լուսամուտի մյուս կողմում են: Թռչունների սև ուրվագծերը, ձյանը դրոշմված քայլերի հետքերը, գյուղի շփոթեցնող խաղաղութունը, անտառի բացատը:

- Էլի նայիր:

Մինչդեռ այս շրջապատն ինձ լավ ծանոթ է: Վաղուցվանից դիտում եմ: Գրեթե ոչինչ չեմ հիշում ամառվանից բարձր ջերմության ու դեղորայքի պատճառով, բայց տեսել եմ բնապատկերի դանդաղ փոփոխությունը, աշնան գորշ երկինքը, կարմրավուն ծառերի ցուլքը: Տեսել եմ եղյամակալ ծարխտոը, անցան գեփյուռից ջարդվող բարձր խտոը, սառած գետնին իջնող առաջին ձնափաթիլները: Տեսել եմ առաջին ձյունից հետո շրջակայքը հետազոտող կենդանիների հետքերը: Այդ ժամանակից ի վեր երկինքն առմիշտ պարու-

րում է շրջապատը: Բնապատկերը սպասողական վիճակում է: Եվ ամեն ինչ հետաձգվել է մինչև գարուն:

Տեսարանն անսահման է: Լեռները կտրում են երկնականարը, անտառը շրջապատում է մեզ ամեն կողմից, իսկ ձյունը կուրացնում է:

- Ուշադիր նայիր, - ասում է Մաթիասը:

Ձննում են երկար ձողը, որ Մաթիասը տեղադրել է բացատում: Նկատում են, որ ձողը մանրամասն չափագծված է:

- Ձյունաչափ է, - հրճվալից հայտարարում է Մաթիասը:

Չեռադիտակով տեսնում են, որ ձյունը հասնում է քառասունմեկ սանտիմետրին: Մի պահ դիտում են շրջապատի ճերմակությունը, հետո ընկնում են մահճակալին՝ փակելով աչքերս:

Չրաշալի է, մտածում են: Այսուհետ կարող ենք չափել մեր տագնապը:

## 42

Մաթիասը հունցում է սև հացի խմորը: Ալրաբլիթ է հնդկացորենից ու մաթից: Ասում է, որ դա կշտացնող է ու սննդարար: Եվ որ դա լավագույն գործելաձևն է, քանի որ պետք է չափավորել սննդամթերքը մինչև հաջորդ առբերումը:

Ծեր շամանի պես նա խառնում է, հունցում ու ձևավորում խմորը՝ ձեռքերի զարմանալի սակավ շարժումներով: Ավարտելուց հետո թափ է տալիս հագուստը՝ ավրի ամպ գոյացնելով, և թխում է սև հացի բլիթները հենց վառարանի երեսին:

Եղանակը պարզվել է: Բլրի ներքևում, ծառերի միջև երևում են գյուղի տները: Դրանց մեծ մասը թվում է անմարդաբնակ, բայց որոշ ծխնելույզներ առատորեն ծխում են: Գորշ սյուններն ուղիղ բարձրանում են օդ՝ ասես հրաժարվելով լուծվել անծայրածիրության մեջ: Տասներկուսն են: Մերի հետ՝ տասներեքը: Չեռադիտակով նայելիս թվում է, թե գյուղը շատ մոտ է, բայց դա պատրանք է: Մինչև գյուղը ավելի քան մեկ ժամվա քայլելու ճանապարհ կա: Իսկ ես դեռ չեմ կարողանում վեր կենալ անկողնուց:

Կարծում եմ՝ ձմեռային արևադարձն անցել է: Երկնքում արևի հետագիծը դեռ շատ կարճ է, բայց օրերն աննկատ երկարում են: Հավանաբար ամառորը նույնպես անցել է: Չգիտեմ: Դա այլևս կարևոր չէ: Ես վաղուց կորցրել եմ ժամանակի ընկալումը: Եվ խոսելու հաճույքը: Ձմռանը գյուղում, որտեղ էլեկտրականություն չկա, կոտրված ոտքերով մարդը չի կարող դիմանալ լռությանը:

Դեռ կա վառելափայտի մեծ պաշար, որը, սակայն, արագ պակասում է: Մենք ապրում ենք ծածկապատշգամբում, որտեղ տիրում է միջանցիկ քամին, և Մաթիասը մի քանի անգամ արթնանում է գիշերը, որպեսզի փայտ գցի

վառարանը: Երբ քանին սաստկանում է, մեզ պարուրում է ցուրտը: Մի քանի օրից մեզ կբերեն վառելափայտն ու մթերքը: Մինչ այդ ինձ մխիթարում են, որ ողջ են մնացել ինքնաշարժի սոսկալի վթարից հետո, թեև հասկանում են, որ ինքնուրույն այլևս ոչինչ չեն կարող անել:

## 42

Լուսնեղջյուրը նանիկ է ասում մութ երկնքին: Ձյունը պատված է հաստ կեղևով: Գիշերվա ցուրտը նմանեցնում են ձյան մակերևույթը հանդարտ, շողշողուն ծովի:

Նավթալամպի լույսը ոսկեփայլ ստվերներ է պատկերում սենյակի պատին: Մաթիասը բերում է ապուրով թասն ու սև հացի բլիթը: Մեր ուտելիքը միշտ ապուր է ու սև հաց: Կաթսայում մնացած ապուրը հաջորդ չափաբաժնի հիմքն է: Երբ հասնում ենք կաթսայի հատակին, Մաթիասն ավելացնում է ջուր և այն, ինչ ճարում է: Եթե միս կա, նա անմիջապես եփում է ոսկորներն ու ճարպը, որպեսզի կրկին արգանակ ստանա: Ավելացվում է ապուրին ամեն ինչ՝ բանջարեղեն, չոր հաց: Եվ ամեն օր, ամեն անգամ մենք կուլ ենք տալիս այդ անհատակ ապուրը: Մինչ Մաթիասը նստում է սեղանի մոտ և մտասույզ խաչում է ձեռքերը, ես կուլ եմ տալիս այն ամենը, ինչ կարող եմ: Հաճախ ավարտում եմ ճաշս, երբ նա չի սկսել ուտել:

Սկզբում Մաթիասն ինձ ստիպում էր ուտել, որպեսզի ուժերս վերականգնվեմ, և գույնս տեղը գա: Օգնում էր ինձ շտկվել և համբերատար կերակրում էր փոքր գդալով, ասես երեխա էի: Հիմա ինքնուրույն կարողանում եմ հենվել բարձին: Ցավն ու թուլությունը շարունակվում են, բայց ախորժակս բացվել է: Երբ Մաթիասին հաջողվում է մի քանի լիտր կաթ ձեռք բերել, նա պանիր է սարքում մերանով, որը գտել է գոմի կաթնեղենի բաժնում: Երբեմն տալիս է այդ պանրից գյուղի մարդկանց, բայց հաճախ այն այնքան լավն է, որ մենք խփշտում ենք մի քանի օրում մինչև քաթանը, որում դա քամվել էր:

Վերքերիս ապաքինումը շատ եռանդ է պահանջում: Անցնող ժամանակի հաշվարկը՝ նույնպես: Գուցե պետք է Մաթիասի նման պարզապես ասեմ՝ ծյունից առաջ կամ ծյունից ի վեր: Բայց դա շատ պարզունակ կլինի:

Արդեն մի քանի ամիս էլեկտրականություն չկա: Ինձ ասացին, որ սկզբում գյուղում երբեմն անջատումներ էին լինում: Որ կարիք չկա անհանգստանալ: Մարդիկ փաստորեն ընտելացել էին դրան: Անջատումից մի քանի ժամ անց հոսանքը վերադառնում էր: Մինչև որ մի առավոտ այլևս չվերադարձավ: Ոչ այստեղ, ոչ էլ այլ տեղերում: Ամառ էր: Մարդիկ շատ չէին նեղվում: Սակայն երբ եկավ աշունը, հարկ եղավ մտածել ամեն ինչ կազմակերպելու մասին: Բոլորն անակնկալի էին եկել: Այժմ ձմեռ է, և ոչ ոք չի կարող մի բան անել:

Տներում բոլորը խմբվում են փայտի վառարանի ու մի քանի սևացած կաթսաների շուրջը:

Մաթիասը դատարկում է ապուրի թասն ու հրում է սեղանի մեջտեղը: Որոշ ժամանակ ոչինչ չի կատարվում: Ես հատկապես սիրում եմ հանգստի այս պահերը, որոնք հաջորդում են ուտելուն:

Բայց դրանք երբեք երկար չեն տևում:

Մաթիասը վեր է կենում, հավաքում է ամաններն ու լվանում ամանեղենի տաշտուն: Հետո պահում է հացի բլիթները ճկազանգված տոպրակում, հավաքում է վառարանի վերևում կախված շորերը, բարձրացնում է նավթալամպի պատրույզը, վերցնում է առաջին օգնության դեղարկղը և մի աթոռ է մոտեցնում մահճակալիս:

## 42

Մաթիասը հազալով մաքրում է կոկորդը, կարծես պատրաստվում է կարդալ ինձ համար: Բայց ոչինչ չի ասում, ճտտացնում է վիզը՝ աջ ու ձախ շարժելով, և վերցնում է ոտքերս ծածկող վերմակը:

Գլուխս շրջում եմ: Մաթիասը երևի կարծում է, թե ես դուրս եմ նայում, բայց ես շատ լավ տեսնում եմ նրա արտացոլումը մութ ապակում: Նա մեկ առ մեկ քանդում է աջ բեկակալի կապերը: Սահեցնում է ձեռքը կրունկիս տակ ու բարձրացնում է ոտքս:

Ձարկերակս արագանում է: Ցավն արթնանում է ու ճանկում ինձ՝ ճկուն ու հզոր գազանի պես:

Մաթիասն զգուշորեն քանդում է վիրակապը: Շարժումները դանդաղ են ու սահուն: Երբ հասնում է թանգիֆի վերջին շերտին, ես զգում եմ, որ խոնավությունը, արյունն ու թարախը կպցրել են գործվածքը մաշկիս: Նա կտրում է վիրակապի մնացորդը մկրատով և զգուշությամբ հանում: Խոր շունչ եմ առնում՝ զգալով, որ օդը լցվում է կրծքավանդակս: Մաթիասը բարձրացնում է գլուխը: Ենթադրում եմ, որ նա զնահատում է կարմրությունը, այտուցը, ոսկրակոշտուկը, մեծ ոլոքի ու ծնկի ձևը:

- Կարերը շուտով կքանդենք, - ասում է՝ ախտահանելով վերքս:

Այրոցի զգացումը շատ սուր է: Թվում է, թե մաշկս հալվում է ոսկորներիս:

- Մի՛ շարժվիր, - սաստում է Մաթիասը, - թող՝ անեմ:

Փորձում եմ հայացքս հնարավորինս հեռացնել իմ ոտքերից, ուղղում եմ սենյակի խորքը, որտեղ երկու դուռ կա: Մեկը մուտքի դուռն է, իսկ երկրորդը տանում է մյուս կողմ: Նայում եմ մեծ վառարանին, դարակների առարկաներին, կացնատաշ հեծաններով առաստաղին և դրանից կախված երկու լամպին, որոնք ասես դինոզավրի կմախքներ լինեն թանգարանում:



Մաթիասը հանում է դեղարկղից մի սրվակ և փորձում է վերծանել դրա պիտակը: Հոգոց հանելով՝ վերցնում է վերնաշապկի գրպանից ակնոցն ու դնում է քթին:

- Սա պետք է օգնի:

Վիրակապը նորից դնելուց առաջ, նա ծածկում է վերքս քուլքի հաստ շերտով: Սառն է: Միառժամանակ մեղմում է ցավը: Մինչև որ նա ձգում է բեկակալիս կապերը՝ ոտքս անշարժացնելով, և սիրտս սկսում է ուժգին զարկել քունքերիս: Ես ամուր ճանկում եմ սավանը՝ բախտս անիծելով: Մաթիասը ինչ-որ բան է ասում: Շուրթերը շարժվում են, բայց ես ոչինչ չեմ լսում: Կարծում եմ՝ ասում է, որ ավարտվեց: Մի քանի վայրկյանից ցավը թեթևակի նվազում է, և ասես շատ հեռվից լսում եմ Մաթիասի ձայնը:

- Դիմացիր, - ասում է, - դիմացիր: Հիմա պետք է մյուս ոտքը մշակեմ:

## 45

Կարծում եմ՝ գիշերը մի քիչ ձյուն է եկել, բայց այս առավոտյան երկինքը կապույտ է ու պայծառ: Քիվից կախված սառցալուլաները պսպղում են:

Վառարանին դրված է ձյունով լի կաթսա: Աշնանը Մաթիասը ուղղակի վերցնում էր ջուրը գյուղ իջնող գետից: Ձուլլալ ու վճիտ ջուր էր: Գլաքարի ու արմատների համով: Երբեմն նա պետք է առավոտյան կոտրեր սառույցը՝ դույլը լցնելու համար: Սկզբում բավական էր սեղմել մակերևույթը ձեռքով, բայց աշնան վերջին ստիպված էր ջարդել ծառի ծյուղով, հետո էլ կացնով: Հետագայում նա հրաժարվեց դրանից և սկսեց հալեցնել ձյունը: Նույն համը չունի, բայց ես չեմ կարող տրտնջալ: Մաթիասն է զբաղվում ամեն բանով: Նա է վառում վառարանը, ուտելիք պատրաստում, դատարկում անոթը, որը իմ պետքարանն է: Նա է որոշում, կարգադրում, ստանձնում: Այստեղ նա է տարածության և ժամանակի տերը:

Իսկ ես հաշմանդամ եմ: Ոչ ուժ ունեմ, ոչ էլ ի վիճակի եմ շարժվել: Նույնիսկ հաղորդակցվելու, փոխազդելու, խոսելու քաջություն չունեմ: Ցանկություն նույնպես: Գերադասում եմ լուռ խորիել դժբախտությանս մասին: Սկզբում Մաթիասը չէր հասկանում, թե ինչու եմ լռում: Կարծում եմ՝ ժամանակով համակերպվեց դրան:

Դժվարանում եմ նկարագրել իրադարձությունների ընթացքը վթարից հետո: Ցավի, ջերմության ու թուլության պատճառով տպավորություն ունեմ, որ օրերի ու շաբաթների սովորական տևողությունը տակնուվրա է եղել ձյան պատճառով: Թվում է, թե ամեն ինչ շատ արագ կատարվեց: Վթարը, փրկարարները, վիրահատությունը. և ես հայտնվեցի այստեղ՝ Մաթիասի կողքին: Լավ գիտեմ, որ նրա համար անցանկալի եմ: Որ իմ ներկայությունը նրան նե-

ղություն է պատճառում, անհանգստացնում է: Որ խախտել են նրա ծրագրերը: Նա չէր նախատեսել այն, ինչ կատարվում է էլեկտրավթարից ի վեր:

Երբ փրկարարներն ինձ գտան շրջված ինքնաշարժի տակ, երևի կարծեցին, թե անհույս վիճակում եմ: Հնարավոր չէր որևէ բան անել: Ուտքերս փշրվել էին հարվածից: Շատ արյուն էի կորցրել: Դեմքս լուսավորելով՝ ինչ-որ մեկը բարեխառաբար ճանաչեց ինձ: Եվ համոզեց մյուսներին տանել ինձ գյուղ:

Անձրև էր գալիս: Ջրի թաթառը փուլ էր եկել անտառին: Հիշում եմ, որ ինձ տանողները դժվարությամբ առաջ էին գնում ցեխի միջով: Գյուղում բժիշկ չկար: Բայց անասնաբույժ կին կար և դեղագործ: Էլեկտրավթարից հետո նրանք էին բուժում վիրավորներին ու հիվանդներին: Նրանք էլ զբաղվում էին ծանր դեպքերով, երբ այլևս հույս չկար:

Փոքր մութ սենյակում ես զամված էի մահճակալին: Ուտքերս փաթաթված էին հաստ վիրակապերով, իսկ դաստակներս ձեռնաշղթաներով ամրացված էին մահճակալի եզրերին: Լուսամուտի վարագույրի արանքով մի քիչ լույս էր թափանցում: Ամեն անգամ, երբ բարձրացնում էի գլուխս՝ տեսնելու, թե որտեղ եմ, մարմնովս սուր ցավ էր անցնում:

Ինձ պարբերաբար այցելում էին: Ուտելիք էին բերում: Հաբեր էին տալիս: Հարցեր էին տալիս: Իմ անո՞ւնը: Ո՞ւր էի գնում: Վթարի հանգամանքնե՞րը: Ես տառապում էի, ինձ շատ վատ էի զգում. աշխարհը ներկայանում էր ինձ մի քանի ուրվապատկերներով, որոնք կռանում էին վրաս, ասես ես անհատակ ջրհոր լինեի: Անընդհատ տալիս էին նույն հարցերը: Ջուր ջանում էի գոռալ ու կռվել. թվում էր, թե ոչ ոք չի հասկանում իմ պատմածը: Նրանք հավանաբար երկմտում էին՝ դադարեցնե՞լ տառապանքս, թե՞ ինձ բուժել:

Երբ ինձ վերջապես մենակ էին թողնում, սրում էի ականջս՝ հասկանալու համար, թե ինչ է կատարվում հարակից սենյակում: Մարդիկ ներս ու դուրս էին անում: Երբեմն ձայները բարձրանում էին, և ես կարողանում էի վերծանել խոսակցությունը: Երբեմն նրանք շշմջում էին, և ես ոչինչ չէի ընկալում:

Պատահաբար ցնցող ազդեցություն ունեցավ: Ես չփոթված էի: Երագուն տեսնում էի իմ ինքնաշարժը: Փնտրում էի հորս: Հուշերս խառնվում էին: Անընդհատ վերհիշում էի տեսարանը: Ճանապարհին անցկացրած օրերն ու գիշերները: Էլեկտրակայանության անջատումը, թալանված սպասարկման կայանները, ոստիկանները ճանապարհների եզրին, խուճապը քաղաքներում: Եվ հանկարծ, գյուղից մի քանի կիլոմետր հեռու, երկու վեր բարձրացրած ձեռք՝ լուսարձակների թույլ լուսավորությամբ: Անվադողերի ճռռոցը խճուղուն: Դեկի պտույտ: Խուլ հարված: Արյուն: Ճաքերը դիմապակուն: Ինքնաշարժի պտույտներ առանցքի շուրջը: Սրահից դուրս շարտվող մարմինս: Հետո շրջված ինքնաշարժի ծանրությունը ուտքերիս:

Ես հեռացել էի այս գյուղից ավելի քան տասը տարի առաջ: Ավելի քան տասը տարի որևէ լուր գրեթե չէի տվել: Մոռացել էի անցյալը և կարծում էի,

թե էլ չեն վերադառնալու այստեղ: Բայց փրկարարը համառուն էր և պնդում, որ ինձ բուժեն: Նրա ձայնը հստակորեն հնչում էր պատի մյուս կողմում:

- Չեղիք է: Յո չենք թողնելու, որ մեռնի այս վիճակում: Նրան չե՞ք ճանաչում: Ինքնաշարժի վարպետի որդին է: Վաղուց չէր եկել այստեղ: Յիմա ցնցման վիճակում է, նրան ապրելու հնարավորություն տվեք: Նրա հայրը նոր է մահացել, բայց նա ազգականներ ունի գյուղում: Նրա հորեղբայրներն ու հորաքույրերն ապրում են հանքավայրի ճանապարհի սկզբում: Ես կբերեմ նրանց:

Իմ հորեղբայրներն ու հորաքույրերը եկան: Նախ՝ կարծեցի, թե ուրվականներ են տեսնում, հետո լսեցի նրանց ձայները, և աչքերս լցվեցին արցունքով:

- Այո, - հաստատեցին իմ ողբալի վիճակից ցնցված հորեղբայրներս, - իրոք նա է:

Այդ ընթացքում հորաքույրերս բռնել էին ձեռքերս՝ փորձելով հասկանալ, թե ինձ ինչ է պատահել: Իսկ ես այնքան երջանիկ էի, որ տեսնում եմ նրանց, որ ոչ մի բան չէի կարողանում արտաբերել:

- Ձեռնաշղթաները, անմիջապես հանե՛ք նրա ձեռնաշղթաները, - պահանջեցին նրանք:

Նրանց բացատրեցին, որ հորս մահվան լուրն իմանալուց հետո ես գրգռված էի և կարող էի վնաս պատճառել վերքերիս: Յորեղբայրներն ու հորաքույրերը գնացին կողքի սենյակ: Գիտեմ, որ խոսում էին իմ վիճակի մասին, բայց չէի լսում՝ ինչ են ասում: Իրավիճակը կարծես լուրջ էր:

Չետո սենյակ մտան անասնաբույժ կինն ու դեղագործը: Տեղավորվեցին մահճակալիս մոտ: Միացնելով ճակատի լապտերը՝ անասնաբույժը կտրեց ոտքերիս փաթաթված վիրակապերը: Աչքի պոչով դիտում էի նրան, քանի որ նրա դեմքի արտահայտությունից կարող էի ինչ-որ բան հասկանալ: Դեմքը կնճռոտեց՝ հավաստելով վնասվածքներիս ծանր վիճակը: Նա դարձավ դեղագործին, որը գլխով արեց: Դիմակ դնելով ու ձեռքերին ձեռնոցներ հագցնելով՝ անասնաբույժն ինձ նայեց, և ես իսկույն հասկացա, որ նա նույնպես ինձ ճանաչեց: Երբ դեղագործը ծածկեց սպունգով բերանս ու քիթս, անասնաբույժն ասաց, որ հաշվեմ մինչև տասը: Նրա ձայնը: Այո, նրա ձայնը ինձ ինչ-որ բան հիշեցրեց: Այո, ձայնը ծանոթ էր թվում, բայց չէի կարողանում հիշել նրա անունը: Նրա լապտերի ճառագայթները պրպտում էին սենյակը: Չետո ամեն ինչ մթնեց:

Երբ ուշքի եկա, չգիտեի՝ որտեղ եմ: Բարեբախտաբար, հորաքույրերս իմ սենյակում էին: Լսում էի նրանց ցածրաձայն խոսակցությունը: Գլուխս բարձրացրի ու տեսա, որ ոտքերս անշարժացված են փայտե լայն բեկակալներով: Տեսնելով, որ շարժվում եմ, նրանք արագ մոտեցան:

- Մի՛ հուզվիր: Վիրահատությունը հաջող էր: Ամեն ինչ լավ կլինի: Կապաքինվես: Առ, մի քիչ խմիր: Չանգստացիր: Պետք է ուժերդ վերականգնես:

Քիչ անց ես ուժասպառ էի և կրկին հայտնվեցի հետապնդման, սոված գազանի և բավիղի մղձավանջում:

Հաջորդ օրը կամ գուցե դրա հաջորդ օրը, չգիտեմ, ինձ տեսության եկավ փրկարարը: Նա վերջապես հանեց ձեռնաշղթաներս: Բերել էր ջուր, մի կտոր հաց և պահածոյացված թյունոս: Օգտագործեց այցելությունը, որպեսզի ինքն էլ հարցեր տա: Երբ տեսավ, որ չեմ պատասխանում, մի պահ լռեց, ապա փոխեց մարտավարությունը:

- Նույնիսկ եթե էլեկտրականությունը վերականգնվի, ոչ մի բան այլևս նույնը չի լինի: Գիտե՞ս, այն, ինչ տեղի ունեցավ էլեկտրավթարից հետո, ձևափոխեց առաջվա կյանքը: Այստեղ մարդիկ գուցե ավելի լավ են կարողանում յուրազնայլ, քան քաղաքում, բայց դա ակնհայտ չէ: Սկզբում բոլորն իրար օգնում էին, բայց հետո ոմանք խուճապահար եղան, մի քանիսը լքեցին գյուղը, իսկ մյուսները փորձեցին օգտվել իրավիճակից: Այժմ հանգստությունը վերականգնվել է: Ուտելիք ենք բաժանում, պարեկում ենք շրջակայքը: Բայց, գիտե՞ս, պետք է զգոն լինել: Ամեն ինչ կարող է տապալվել ամենափոքր միջադեպից:

Փրկարարի խոսքն ընդհատելով՝ ներս մտան անասնաբույժն ու դեղագործը:

- Լա՞վ ես:

- Հա, տանելի է:

Անասնաբույժը ստուգեց ոտքերս, մինչդեռ դեղագործը ինձ ստիպեց կուլ տալ հաբերի մի խառնուրդ:

- Ջերմություն չունի, - ասաց անասնաբույժը՝ չափելով ջերմաստիճանս:

- Իմ սոված դեղերի շնորհիվ է, - միջամտեց դեղագործը, - ուրիշ ոչինչ:

Անասնաբույժն ասաց, որ ոսկորներս կոտրված էին մի քանի տեղից: Եվ որ անցյալում կատարել է մի քանի նման վիրահատություն, բայց վիրահատել է միայն կովերին, ձիերին ու շներին:

Ես ժպտալով նայեցի կնոջը:

Նա շոյեց գլուխս:

- Դու կապաքիմվես:

Հետո բոլորը գնացին հարակից սենյակ: Միջնորմի միջով լսում էի դեղագործի ձայնը:

- Նա ողջ մնաց վթարից հետո, լավ տարավ վիրահատությունը, բայց վերքերը ի վերջո կբորբոքվեն: Դա անխուսափելի է: Հակաբիոտիկների ու ցավազրկիչների մեծ կարիք կլինի, իսկ մեր պաշարները սահմանափակ են:

Նրանց մտահոգում էր այն հարցը, թե ով է ինձ խնամելու: Ըստ երևույթին իմ հորեղբայրներն ու հորաքույրերը: Էլեկտրավթարի պատճառով բոլորը

գերզբաղված էին: Անելու շատ բան կար: Ուրիշ ո՞վ ժամանակ կունենար հոգ տանելու մեծահասակ վիրավորին: Նրան խնամե՞լ, կերակրե՞լ, լվանա՞լ:

Խոսակցությունը ցածրաձայն շարունակվեց, և ես չլսեցի դրա շարունակությունը:

Մի քանի օր անց ոտքերս այտուցվեցին, վերքերս այնքան ցավոտ էին, որ դժվարանում էի շնչել: Փայտացած էի ու քրտնակոլոլ: Ինքնուրույն ոչինչ չէի կարողանում անել: Մահճակալիս մոտ հերթապահություն սահմանվեց: Խնամողներս խցանում էին ականջները, որպեսզի չլսեն իմ տենդոտ հեծեծանքը:

Օրը երկու անգամ անասնաբույժը ներարկում էր ինձ: Մի քանի ժամ շունչ քաշելու հնարավորություն էի ստանում, մինչև որ ցավը վերադառնում էր ու մշուշում հայացքս:

- Ես գիտեի, - հառաչում էր դեղագործը, - գիտեի, որ ի վերջո նրան տալու ենք մեր ամբողջ դեղորայքը:

Դեղահաբերի ու ներարկումների շնորհիվ ես կարողանում էի քնել: Բայց արթնանալիս չգիտեի, թե որքան երկար եմ քնել՝ մի քանի րոպե, մի քանի ժամ, թե մի քանի օր: Կրկնվող երազ էի տեսնում, թե իբր ինձ պառկեցրել են գետնին, և ինչ-որ մեկը հատում է ոտքերս: Կացմի հարվածով: Եվ դա չէի ընկալում որպես մղձավանջ: Ինձ հանկարծ ազատված էի զգում:

Հորեղբայրներն ու հորաքույրերը հաճախ այցելում էին ինձ: Ու թեև տեսնում էի լոկ նրանց մշուշված ստվերները, ես լսում էի նրանց ասածները, պատումներն ու կատակները: Հետո մի օր ասացին, որ այլևս չեն կարող գալ: Որսորդության ժամանակն էր: Բազմաթիվ ընտանիքներ արդեն անտառում էին: Էլեկտրականությունը չէր վերադարձել, և հարկավոր էր սննդի պաշար ապահովել ձմռան համար:

- Մենք գնում ենք որսորդական ճամբար, - հայտարարեցին ինձ, - կվերադառնանք մի շաբաթից ու շատ միս կբերենք: Կուզեի՞նք՝ գաս մեզ հետ, բայց դա անհնար է: Մինչ այդ հանգիստ կաց, դու լավ ձեռքերում ես: Նրանք մեզ խոստացան, որ քեզ հոգ կտանեն: Իսկ դու պետք է սևեռվես ապաքինվելուդ:

Նրանք ինձ հերթով հրաժեշտ տվեցին ու հեռացան: Չէի ուզում, որ գնան:

Միառժամանակ անց փրկարարի, անասնաբույժի ու դեղագործի ուղեկցությամբ իմ սենյակ եկավ մարդկանց մի փոքր խումբ: Նրանցից մեկն ասաց, որ ես չեմ կարող մնալ այստեղ՝ այս տանը: Ես զգում էի, որ ներկաների հայացքները շրջում են պատերի երկայնքով, սահում են գետնով ու անհետանում են հատակի բարակ ճեղքերում: Ոչ ոք չէր ցանկանում ավելորդ բեռ վերցնել: Երևի պետք էր ինձ թողնել բախտիս՝ ինքնաշարժի տակ լռված: Անասնաբույժը խախտեց լռությունը՝ առաջարկելով ստանձնել իմ խնամքը, մինչև որ ազգականներս վերադառնան: Դեղագործն անմիջապես սաստեց նրան.

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

Կրիստիան Գե-Պոլիկեն

## Ձյան բեռը

Վեպ

Թարգմանիչ՝ Կարինե Աղաբեկյան  
Խմբագիր՝ Ալեքսանդր Աղաբեկյան  
Կազմի գեղակառույցը՝ Ալեքսանդր Աղաբեկյան  
Չեղինակի լուսանկարը՝ © Julien Bois

«Գիտանք» հրատարակչություն  
Երևան 0002, Մաշտոցի պողոտա 36, բն.14  
հեռախոս/հեռապատճեն՝ +374 10 530 629  
Էլփոստ՝ aaghabekyan@yahoo.com